



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի  
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման  
ապահովում» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազմադրյուրի Ն.Սաֆարյանի անվան  
միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Առարկա՝ Քիմիա

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի  
ձևավորումը քիմիա առարկայի դասավանդման  
ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան  
Ուսուցիչ՝ Վարդանուշ Գյոզալյան

Երևան 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ1. ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ	
1.1.ԿՐՏՄԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....	6
1.2.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	11
ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ.....	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	23
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	25

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Աճող սերնդի կրթության և դաստարակության առաջին քայլերը իրականացվում են դպրոցում՝ ուսուցանվող առարկաների միջոցով: Պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում են: Մանկավարժի խնդիրը ոչ միայն կրտսեր սովորողների կողմից որոշակի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովումն է, այլ նաև նրանց մեջ անձնային որոշակի որակների, խորը համոզմունքների, զգացմունքների, սովորությունների, արժեհամակարգի ձևավորումը, որոնք կհամապատասխանեն տվյալ հասարակության պահանջներին եւ բարոյականության նորմերին: Դպրոցում ողջ մանկավարժական գործընթացը կազմակերպվում են կառուցվում է ուսուցման եւ դաստիարակության գործընթացների միասնությամբ, որն էլ հնարավորություն է տալիս կրթելու տվյալ հասարակության համար պիտանի քաղաքացի:

Մարդկային հասարակության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդէ-սերունդ: Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբնոցը դպրոցն է: Ուսումնառության ողջ գործընթացում աշակերտները ձեռք են բերում ոչ միայն բազմապիսի գիտելիքներ, կարողություններ, աշխարհաճանաչողություն, այլև անձնային բարձր որակներ: Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է ն՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ: Սովորողների զարգացման գործընթացում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում երեխայի զարգացման լայն հնարավորությունների մասին: Այս ժամանակահատվածում երեխայի զարգացման ներուժն իրականացվում է՝ ճանաչելով շրջակա աշխարհը, ձեռք բերելով հասարակական գործունեության սեփական փորձը:

Հասարակական կյանքի տեղաշարժերը մանկավարժներին թելադրում են նոր մոտեցումներ հանդես բերել դասավանդման գործընթացում, դրա միջոցով՝ արժեքային վերաբերմունքի ձևավորման նկատմամբ: Այս առումով կարևորվում և առաջնային նշանակություն է ստանում դպրոցականների համագործակցային, փոխըմբռնման, ինքնուրույնության և արժեկողմնորոշիչ այլ կարողությունների ձևավորումը:

Աճող սերնդի կրթության և դաստարակության առաջին քայլերը իրականացվում են դպրոցում: Սովորողները պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին տարբեր ճանապարհներով, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում են[10,25էջ] :

Այսօր արդեն մեծ հետաքրքրություն է առաջացնում այն հարցերը, թե ուսումնական առարկաները ինչ տեղ են զբաղեցնում ողջ կրթական գործընթացում, ի՞նչ ժամանակակից գործառույթներ ունեն, ինչ դեր ունեն սովորողների դաստիարակության գործում և ինչպես են ազդում կրթության որակի բարձրացման վրա:

Դպրոցում, կարևորելով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում դասավանդվող առարկաներին և դրանց բովանդակությանը: Առանձին ուշադրություն է դարձվում հատկապես «բնագիտական» առարկաներին, քանի որ սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունեն «քիմիայի» դասագրքերում ներառված դասանյութերի բովանդակությունը, արձածված հարցերն ու առաջադրանքները:

- **Թեմայի արդիականությունը** կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ: Նշանակալից վերափոխումները ազդել են նաև հանրակրթության և առարկայական պետական չափորոշիչների վրա՝ ուղղված կրթելուն, երկրորդայնացնելով դաստիարակության, արժեկողմնորոշման հիմնախնդիրը:
- դպրոցում որոշիչ է ՀՀ քաղաքացու անձի արժեքային բարոյական դաստիարակությունը, սակայն այս արժեքներից առաջնային է համարվում դասագրքերի ընտրությունը և արդյունավետությունը պետք է համապատասխանի մերօրյա կրթական պահանջներին և լինի նպատակաուղղված ազգային արժեքների ձևավորմանն ու համարժեք վարքաձևով դրսևորմանը:

## **Հետազոտության նպատակը՝**

Դպրոցում «Քիմիա» առարկայի դերի կարևորումն է դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում և մոդելի առաջադրումն է:

## **Հետազոտության խնդիրները**

- 1.Ներկայացնել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը դպրոցում:
- 2.Կարևորել «Քիմիա» առարկայի արժեկողմնորոշիչ նշանակությունը դպրոցում:
- 3.Առաջադրել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման մոդել :

## **Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:**

Մեր հետազոտության համար մեթոդաբանական հիմք են դարձել Արժեքների, արժեքային կողմնորոշումների դերը անձի ձևավորման գործում: Դիտարկվել են Լ. Ի. Բոժովիչի, Ա.Գ. Ջորավոմիսլովայի, Ա.Ն. Լեոնտևի, Ս.Լ. Ռուբինշտեյնի կողմից մշակած արժեհամակարգերը: Ըստ Ա.Ն. Լեոնտևի՝ արժեքը հոգեբանական երևույթ է դառնում այն դեպքում, երբ ձեռք է բերում անձնային բնույթ: Ա. Ն. Լեոնտևը նշում է, որ «տվյալ առարկայի նշանակության յուրացումը երեխայի կողմից տեսականորեն, թե գործնականորեն բավական չէ, անհրաժեշտ է դաստիարակել պահանջվող վերաբերմունք»[7, էջ18]:

## **Հետազոտության կիրառական նշանակությունը՝**

Մեր կատարած տեսական և հետազոտական ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջադրված դպրոցում բնագիտական առարկաների կարևորմամբ արժեհամակարգի ձևավորմանն ուղղված մոդելը կարող է նպաստել դպրոց-ընտանիք փոխհամագործակցային սովորողակենտրոն մանկավարժական գործունեությանը:՝

## **Հետազոտության մեթոդները**

- գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի ուսումնասիրություն և վերլուծություն,
- հարցաթերթիկային հարցում

## ԳԼՈՒԽ 1.

### ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

#### 1.1.ԿՐՏՄԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդրի կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում հասարակության արժեքային պատկերացումների շարունակական գործընթացներից: Ձևավորված արժեհամակարգի հիման վրա են որոշվում անձի վարքի դրսևորումներն ու մտածելակերպը: Արժեհամակարգը բնորոշում են հասարակական արժեքների նկատմամբ անձի ընտրական վերաբերմունքը, որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում:

Արդի մանկավարժության պահանջներից է դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հարկ է դիտարկել արժեքների ընկալման, գնահատման և գործնականում դրանց նկատմամբ արտահայտած վերաբերմունքի տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցն ուղղորդում, խորացնում և ամրապնդում է դպրոցականների արժեհամակարգը՝ դրանք համալրելով ու հարստացնելով կրթամշակութային ոլորտի արժեքային ձեռքբերումներով, որոնք սկզբում դպրոցի, հետագայում նաև հիմնական դպրոցի կրթության բովանդակության բաղադրատարրերն են կազմում[7, 15էջ]:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: «Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ

մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի»,- նշում է Գայանե Սողոմոնյանը[8էջ,54]:

Արդի կրթական համակարգում դեռևս պահպանվում է արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված հետևյալ մոտեցումը՝ դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հասկանիշների ճշմարտացիությունը: Մանկավարժության մեջ արժեքային կրթության նոր մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ այս մոտեցման՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

Արժեքների և արժեքային կողմնորոշումների մասին տարբեր մտածողներ սկսել են խոսել հասարակական զարգացման ամենավաղ փուլերում: Արժեքների ձևավորման հիմնախնդրին անդրադարձել են հին հույն մատերիալիստ, փիլիսոփա Պլատոնը, Դեմոկրիտը, Սոկրատեսը, իդեալիստ փիլիսոփա Պլատոնը, Արիստոտելը: Հիշատակության է արժանա վերածննդի և լուսավորության դարաշրջանի գիտնականների արժեքանական գիտական հայեցակարգերը՝ ՄիշելՄոնտե, Ֆ. Բեկոն, Ռ. Դեկարտ, ՋոնԼոկ, Ի. Կանտ, Ֆ. Նիցշեն և այլոք:

Արժեքը և նշանակությունը միշտ չէ, որ համընկնում են: Նշանակությունը կարող է լինել դրական կամ բացասական, արժեքը դրական նշանակություն է: Արժեքը՝ սոցիալական կյանքի դրսևորում է: Այն ձևավորվում է պրակտիկայի, արժեքի մեջ, այսինքն, այն ունի հասարակական բնույթ: Պրակտիկայի հետ կապը որոշում է արժեքների պատմական փոփոխականությունը, արժեքները փոխվում են հասարակության զարգացման հետ, ինչը երեկվա արժեքն է, այսօր կարող է դադարել լինել: Հասարակության կյանքում արժեքների դերը հետևյալն է.

1. Տարբեր արժեքների յուրացման միջոցով մարդը ձեռք է բերում սոցիալական փորձ, կցված է մշակույթին, ձևավորվում է որպես անձ:

2. Մարդը ստեղծում է նոր և պահպանում է հին արժեքներ, որոնք ազդում են մշակույթի զարգացման վրա:
3. Գործողությունների, մտքերի, իրերի արժեքը այն է, թե որքան են նրանք նպաստում սոցիալական առաջընթացին և որքանով է նրանց դերը մեծ մարդու ինքնիրացման գործում:

Արժեքների, արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը տեսական ժամանակ փիլիսոփայական ուղղվածություն ուներ: Ավելի ուշ մանկավարժական արժեքանությունը ձևավորվեց որպես առանձին գիտաճյուղ: Հայ իրականությունում ակնհայտ փաստ է, որ դպրությունը, գիրն ու գրականությունը միշտ էլ դիտարկվել է բարձրագույն արժեք: Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը «Անվիճելի է, որ կրթությունը, լուսավորությունը, առաջնային են եղել Մ. Մաշտոցի արժեքային գիտակցության մեջ, ապացույցը նրա ողջ կյանքը, պետական-հասարակական և մանկավարժական գործունեությունը և այն մեծաթիվ հոգևոր արժեքներն են, որոնք ստեղծվեցին գրերի գյուտից հետո և շարունակում են ստեղծվել ցայսօր: Դրանով իսկ Մ. Մաշտոցը յուրաքանչյուր հայի ազգային գիտակցության մեջ է որպես հայոց մեծ սուրբ, հայ ժողովրդի ազգային մեծագույն արժեք» [7, էջ 85]:

Լ. Թորգոմյանը գալիս է այն եզրակացության, որ «Արժեքանական մոտեցման տեսանկյունից քննարկելով հայ մշակույթի գործիչների կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը՝ գալիս ենք հետևության, որ արժեքներով միաբանված այս մտածողների հայացքներում ընդհանուր են երկիրը, ժողովուրդը, մարդը, քրիստոնեությունն ու նրա հոգևոր արժեքները, կրթությունը, դաստիարակությունը, գիտությունը, լուսավորությունն ու դրանցից ածանցվող այլ արժեքներ» [7 էջ, 77]:

Ս. Լ. Ռուբինշտեյնը փաստում է, որ արժեքները, արժեքային կողմնորոշումները առաջնային չեն, նրանք մարդու և աշխարհի փոխհարաբերության արդյունք են, որոնք միավորում են այն ամենը, ինչ ստեղծել և արժևորել է մարդը իր պատմական զարգացման ընթացքում:

Արժեքների, արժեքային կողմնորոշումների դերը անձի ձևավորման գործում դիտարկվել են մի շարք հոգեբանների կողմից (Լ. Ի. Բոժովիչը, Ա.Գ. Ջորավոմիսլովան, Ա.Ն. Լեոնտևը, Ս.Լ. Ռուբինշտեյնը և այլք): Ըստ Ա.Ն. Լեոնտևի՝



արժեքը հոգեբանական երևույթ է դառնում այն դեպքում, երբ ձեռք է բերում անձնային բնույթ: Ա. Ն. Լեոնտևը նշում է, որ «տվյալ առարկայի նշանակության յուրացումը երեխայի կողմից տեսականորեն, թե գործնականորեն բավական չէ, անհրաժեշտ է դաստիարակել պահանջվող վերաբերմունք» [11էջ, 15]:

Այսօր հանրակրթական դպրոցում առաջնային է սովորողների արժեքային կողմնորոշումների, արժեհամակարգի ձևավորումը, որն ապահովում է անձի ընդհանուր զարգացումը, վարքի ձևավորումը:

Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը «Արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները և կողմնորոշումները մարդու վարքագծի ներքին կարգավորիչներն են: Յուրաքանչյուր մարդ, կառուցելով իր միջանձնային և հասարակական վարքագիծը, ղեկավարվում է որոշակի բարոյական արժեքներով:

Ըստ Ս.Ս. Բուբանովայի՝ արժեքների և անձի արժեքային կողմնորոշումների համակարգում գործում են.

- վերացական արժեքներ՝ հոգևոր, սոցիալական, նյութական,
- արժեքներ, որոնք ամրապնդվում են կյանքի ընթացքում և դառնում անձի հատկանիշ, որակ,
- արժեքներ, որոնք պայմանավորում են անձի վարքը [9էջ, 25]:

Ըստ Մ. Ռոկիչի՝ կարևոր և դրդապաճառային արժեքների ընդհանուր թիվը մեծ չէ և արժեքների յուրաքանչյուր խումբը համակարգ է:

Արժեքային կողմնորոշումները սուբյեկտի վերաբերմունքն է իր գոյության պայմաններին, որտեղ դրսևորվում է սոցիալապես նշանակալի առարկայի ազատ գնահատման արդյունքը: Արժեքային կողմնորոշումները անձի հիմքն են, որը որոշում է իր ակտիվությունը: Արժեքների դասակարգումը.

1. Ըստ անհրաժեշտության՝ նյութական, հոգևոր:
2. Ըստ նշանակության՝ ճշմարիտ, կեղծ:
3. Ըստ գործունեության ոլորտի՝ տնտեսական, էսթետիկական, կրոնական և այլն:
4. Ըստ արժեքները կրողի՝ անհատական, խմբային, համամարդկային:

Հայաստանում անձի արժեքների, արժեքային կողմնորոշումների խնդիրը կապված է նաև ազգային մտածողության առանձնահատկություններից, որն ունի երեք հիմքեր՝ ընտանիք, ուսուցիչ և իդեալներ: Ընտանիքը՝ որպես սոցիալական հաստատություն, կարևոր է երեխայի անձի բարոյական որակների, հատկությունների, վարքի նորմերի ձևավորման գործում: Ուսուցիչը նույնպես փոխակերպվեց ժամանակակից հասարակության մեջ: Նրա վարքի բնույթը փոխվել է ինչպես դպրոցում, այնպես էլ հասարակության մեջ: Նա դադարել է միավորել իր մեջ ուսուցչին և դաստիարակին: Ուսուցիչը դադարել է լինել ընկեր, խորհրդատու, դարձել է անտարբեր մտածող: Աղքատ ուսուցիչը այլևս հեղինակություն չէ շատ դպրոցականների համար: Բնականաբար, նման ուսուցիչը և նրա առաջադրած արժեքները սովորողների շրջանում որոշ հակամարտություններ է առաջացրել:

Ընդհանուր առմամբ, արժեհամակարգի ձևավորումը կրտսեր սովորողների մոտ նպատակ ունի ձևավորել հայրենասեր անձ և քաղաքացի, որը պետք է՝

1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
2. Հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
3. Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:
4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:
5. Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ:
6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը:
7. Գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:
8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:

9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ:
10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:
11. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:
12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում [11էջ, 75]:

Այսպիսով՝ սովորողների արժեհամակարգի ձևավորումը բավականաչափ բարդ և շարունակական գործընթաց է և երկար ժամանակ է պահանջում:

Այս գործընթացում անմասն չպիտի մնա նաև ընտանիքը: Հույժ կարևոր է ծնողի հետևողական և տեղեկացված լինելը այս հիմնախնդրում: Եվ ինչպես հիմնավորում է Ա. Թոփուզյանը՝ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները կանխման և հաղթահարման ուղիները» խորագրով գիտաժողովի ընթացքում, դպրոցն ու ընտանիքը, ծնողն ու ուսուցիչը գործընկերներ են և նրանց նպատակները նույնն են: Պրոֆեսորի կարծիքով, պետք է թերթել հայ մանկավարժության ժառանգության՝ հատկապես ընտանեկան դաստիարակությանը նվիրված էջերն ու դրանցից քաղած դասերը համադրել դարի պահանջների հետ»[9, էջ56]:

## **1.2.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Քիմիայի իմացությունը մեծապես նպաստում է սովորողի աշխարհայցքային գաղափարների ձևավորմանը և վճռորոշ ազդեցություն ունի քաղաքակրթության, գիտատեխնիկական առաջընթացի և համանարդկային մշակույթի զարգացման վրա:

Անհնար է բնական որևէ երևույթի կամ նյութի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ ստանալ առանց քիմիական գիտելիքների կիրառման: Քիմիան անբակտելի կապի մեջ է բնական գիտությունների՝ ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի, երկրագիտության, աշխարհագրության և բժշկագիտության հետ: Դրանց փոխկապակցվածությունը դարձել է այնքան բնական ու անհրաժեշտ, որ ծնունդ են առել մի շարք զարգացող գիտական ուղղություններ՝ ֆիզիկական քիմիա, կենսաքիմիա, դեղագիտական քիմիա, երկրաքիմիա, տիեզերքի քիմիա և այլն: Այդ ինտեգրացված գիտությունների փոխկապակցված զարգացումը սովորողին հնարավորություն է տալիս զարգացնել իր ճանաչողական հետաքրքրությունները, թափանցել բնության, տիեզերքի գաղտնիքների մեջ և բացահայտել բազմաթիվ առեղծվածային երևույթներ և հաստատել, որ բնության օրենքները գործում են անխափան, ինչը նպաստում է սովորողի համար գիտական աշխարհայացքի արժևորմանը: Քիմիայի զարգացման շնորհիվ մարդուն և գիտությանն անհրաժեշտ միլիոնավոր նյութեր են սինթեզվել: Այսօր, մոտ 20 միլիոն օրգանական և 0,5 միլիոն անօրգանական միացություններ են հայտնի՝ օժտված որոշակի կառուցվածքով և հատկություններով, որոնք գիտատեխնիկական առաջընթացի հիմնաքարն են հանդիսանում: Մեզ շրջապատող կենցաղային իրերից սկսած մինչև նորագույն տեխնոլոգիաներն անհնար է պարկերացնել առանց համակարգված քիմիական գիտելիքների: Գիտության ցանկացած բնագավառում, այդ թվում նաև քիմիայում դրսևորվում է մարդկային բանականության գործունեությունը: Քիմիայի իմացութ- յունը հնարավորություն է տալիս կանխել շրջակա աշխարհին սպառնացող վտանգները, լուծել էկոլոգիական հիմնախնդիրներ:

Արժեքային համակարգը արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով: Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝ գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ, կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը, գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ, անաչառ գնահատի իր ուժերը, կարողություն-ները բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը, դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում: Քիմիա ուսուցանելիս գիտակցի և կարևորի նյութերի դերը առօրյա կյանքում գիտատեխնիկական առաջընթացում, գիտակցի շրջակա աշխարհի վերաբերյալ գիտական պատկերացումները և կարևորի բնության օրենքների միասնականությունը: Կարևորի քիմիական գիտելիքների նշանակությունը բնապահպանական հարցերում, նպատակասլացությունը փորձնական աշխատանք կատարելիս, խնդիրներ լուծելիս, դրսևորի վստահություն սեփական ուժերի հանդեպ, լինի նախաձեռնող: Միջնակարգ կրթության քիմիայի ուսուցման ընդհանուր նպատակը բնության երևույթները հասկանալու, ձեռք բերած գիտելիքները բնության մեջ, առօրյա կյանքում և կենցաղում կիրառելու կարողությունների ձևավորումն է: Միջին և ավագ դպրոցում քիմիայի ուսուցումը հիմնական մակարդակում ուղղված է հետևյալ նպատակներին.

Գիտելիքների յուրացում աշխարհի բնագիտական պատկերի քիմիական բաղադրիչի, կարևորագույն քիմիական հասկացությունների, օրենքների և տեսությունների մասին, կարողությունների տիրապետում, կիրառելու ստացած գիտելիքները տարբեր քիմիական երևույթների, նյութերի հատկությունների բացատրման համար, գնահատելու քիմիայի դերը ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման և նոր նյութերի ստացման բնագավառում: Մեկ ընդ միշտ գիտակցել գիտության և տեխնիկայի կիրառման սահմաններն ու հնարավորությունները: Ճանաչողական հետաքրքրությունների և մտավոր մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում: Քիմիա ուսուցանելիս գիտակցի և կարևորի նյութերի դերը առօրյա կյանքում գիտատեխնիկական առաջընթացում, գիտակցի շրջակա աշխարհի վերաբերյալ գիտական պատկերացումները և կարևորի բնության օրենքների միասնականությունը: Կարևորի քիմիական գիտելիքների նշանակությունը բնապահպանական հարցերում, նպատակասլացությունը փորձնական աշխատանք կատարելիս, խնդիրներ լուծելիս, դրսևորի վստահություն սեփական ուժերի հանդեպ, լինի նախաձեռնող:

Միջնակարգ կրթության քիմիայի ուսուցման ընդհանուր նպատակը բնության երևույթները հասկանալու, ձեռք բերած գիտելիքները բնության մեջ, առօրյա կյանքում և կենցաղում կիրառելու կարողությունների ձևավորումն է: Ավագ դպրոցում քիմիայի ուսուցումը հիմնական մակարդակում ուղղված է հետևյալ նպատակներին.

Գիտելիքների յուրացում աշխարհի բնագիտական պատկերի քիմիական բաղադրիչի, կարևորագույն քիմիական հասկացությունների, օրենքների և տեսությունների մասին, կարողությունների տիրապետում, կիրառելու ստացած գիտելիքները տարբեր քիմիական երևույթների, նյութերի հատկությունների բացատրման համար, գնահատելու քիմիայի դերը ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման և նոր նյութերի ստացման բնագավառում: Մեկ ընդ միշտ գիտակցել գիտության և տեխնիկայի կիրառման սահմաններն ու հնարավորությունները: Ճանաչողական հետաքրքրությունների և մտավոր ընդունակությունների զարգացում քիմիական գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման գործընթացում՝ օգտագործելով տեղեկատվության տարբեր աղբյուրներ, այդ թվում և համակարգչային, քիմիայի ունեցած դրական դերի, սեփական առողջության և շրջակա միջավայրի նկատմամբ գրագետ վերաբերմունքի վերաբերյալ դաստիարակում համոզմունք ժամանակակից հասարակության կյանքում, քննարկել տեխնոլոգիական հիմնախնդիրներ, որոնց առնչվում են մեր հասարակությունը և ամբողջ աշխարհը: Ստացած գիտելիքների և կարողությունների կիրառում կենցաղում, գյուղատնտեսության մեջ և արտադրությունում նյութերի անվտանգ օգտագործման համար, առօրյա կյանքում գործնական խնդիրներ լուծելիս, համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրների լուծման ուղիներ փնտրելիս: Բարձր դասարաններում քիմիայի ուսուցումը մասնագիտական մակարդակում թույլ է տալիս հասնել հետևյալ նպատակներին. գիտելիքների համակարգի յուրացում, քիմիական գիտության հիմնարար հայտնագործությունների, ատոմի կառուցվածքի մասին ժամանակակից պատկերացումների, օրգանական և անօր- գանական միացություններում քիմիական կապի բնույթի, քիմիական ռեակցիաների մեխանիզմների, այլ գիտությունների հետ քիմիայի ունեցած փոխադարձ կապի, բնության երևույթների ճանաչման և մարդու պրակտիկ գործունեությունում նրա ունեցած դերի մասին հարցերը քննարկելիս

Բարձր դասարաններում քիմիայի ուսուցումը մասնագիտական մակարդակում թույլ է տալիս հասնել հետևյալ նպատակներին. գիտելիքների համակարգի յուրացում, քիմիական գիտության հիմնարար հայտնագործությունների, ատոմի կառուցվածքի մասին ժամանակակից պատկերացումների, օրգանական և անօր- գանական միացություններում քիմիական կապի բնույթի, քիմիական ռեակցիաների մեխանիզմների, այլ գիտությունների հետ քիմիայի ունեցած փոխադարձ կապի, բնության երևույթների ճանաչման և մարդու պրակտիկ գործունեությունում նրա ունեցած դերի մասին հարցերը քննարկելիս սովորողները արժևորում են գիտական աշխարհայացքը, բնության նկատմամբ ինսյոդական վերաբերմունքը, բնության ճանաչման տեսական և փորձնական մեթոդների յուրացումը, վարկածների առաջ քաշումը և դրանց հաստատման համար փորձնական հետազոտությունների կատարումը: Ստացած գիտելիքների կիրառման ունակությունների տիրապետում բացատրելու հանար. երևույթների և նյութերի բազմազանության պատճառները, նյութերի հատկությունների պայմանավորվածությունը դրանց բաղադրությամբ և կառուցվածքով, բնության մեջ ընթացող գործընթացների քիմիական օրինաչափությունների վրա մարդկային գործոնի ազդեցության առանձնահատկությունները: Իրականացնում ենք նաև իմացական հետաքրքրությունների, տրամաբանական և ստեղծագործական ընդունակությունների զարգացում՝ ուսումնական հիմնախնդիրների լուծման ուղիներ փնտրելիս, որոնք ծագում են քիմիական գիտահետազոտական փորձեր կատարելիս կամ կենսական կարևոր քիմիական հարցեր քննարկելիս:

Դաստիարակում են համոզվածություն, որ քիմիան շրջակա միջավայրի վրա ազդելու հզոր միջոց է, պատասխանատվության զգացում՝ ստացած գիտելիքների և կարողությունների կիրառման, ստեղծագործական վերաբերմունք իմացական գործընթացի և հարգանք գիտնականների ու փորձարարների ստեղծագործ աշխատանքի նկատմամբ, առօրյա կյանքում էկոլոգիապես գրագետ վարքագծի անհրաժեշտություն, ձեռք բերված գիտելիքների և ունակությունների կիրառություն լաբորատորիայում, կենցաղում և արտադրության մեջ նյութերի հետ անվտանգ աշխատանքի, առօրյա կյանքում գործնական խնդիրներ լուծելու



մարդու կենսագործունեության անվտանգության ապահովման, գիտակցաբար մասնագիտություն ընտրելու համար: Սովորողների ինքնուրույն որոնողական և հետազոտական գործունեությունն ինքնուրույն գործունեության բարձրակարգ ձևն է, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ սովորողներն ունեն բավարար գիտելիքներ, որն անհրաժեշտ է գիտական դրույթների կառուցման, ինչպես նաև վարկածներ առաջադրելու համար: Պետք է նշել, որ ուսումնական հետազոտությունն օժտված է մի քանի առանձնահատկություններով.

1. Ճշմարտությունը, որը սովորողները բացահայտում են ուսումնական հիմնախնդրի լուծման ընթացքում, գիտությանն արդեն հայտնի է:

2. Աշակերտների համար այդ փաստերը նոր են, և նրանք մտածում են՝ ինչպես առաջին անգամ հայտնագործողներ,

ուսումնական հետազոտությունը միշտ կատարվում է քիմիայի ուսուցչի ղեկավարությամբ, նրա անմիջական մասնակցությամբ և օգնությամբ: Բայց, դրա հետ մեկտեղ՝ սովորողները պետք է համոզված լինեն, որ իրենք ինքնուրույն են հասել նպատակին:

3. հետազոտական առաջադրանքը ենթադրում է, որպես կանոն, սկզբում փաստահավաք գործնական աշխատանքի կատարում (փորձ, դիտարկում, դիտում, գրքի հետ աշխատանք), և դրանից հետո՝ միայն տեսական վերլուծություն ու ընդհանրացում: Այս դեպքում խնդիրը դուրս չի բերվում միանգամից, հայտնվում է անհամապատասխանելիության, բացահայտված փաստերի միջև հակասությունների հայտաբերման ընթացքում: Պարբերական օրենքի ուսումնառության ժամանակ աշակերտները կարող են հստակ համոզվեն, որ, նյութերի և նրանց միացությունների հատկությունները պարբերական կախման մեջ են իրենց ատոմի միջուկի լիցքի մեծությունից (ատոմի էլեկտրոնային կառուցվածքից): Հաստատելով միջառարկայական կապ ֆիզիկայի հետ կարելի է չափորոշային գիտելիքների մակարդակը բարձրացնել, ավելի հանգամանորեն ուսումնասիրել ատոմի էլեկտրոնային կառուցվածքը (s,p,d- էլեկտրոնային օրբիտալները, նվազագույն էներգիայի և Պաուլի սկզբունքները, Հունդի կանոնը):

Քիմիայի ուսուցմանը անձնակողմնորոշային բնույթ տալու համար անհրաժեշտ պայմանները այն պայմաններն են, որոնք կարող են ապահովել յուրաքանչյուր աշակերտի ընդգրկումը ակտիվ իմացական գործունեության մեջ, կանխատեսում են ստացած գիտելիքների օգտագործման հնարավորությունը պրակտիկայում և հստակ գիտակցումն այն բանի, թե որտեղ, ինչպես և ինչ նպատակների համար կարող են օգտագործվել այդ գիտելիքները: Քիմիայի ուսումնասիրելիս նման գործունեություն է տեղեկատվության որոնումը, վերլուծությունը և սալիկահանդեսը (պրեզենտացիոն), երբ աշակերտների կողմից պատրաստվում է հաղորդագրություն, զեկուցում, ռեֆերատ: Այդ ընթացքում ձևավորված կարողությունները և հմտությունները վերաբերվում են հանրակրթական տեղեկատվական կումպետենտությանը, որոնք անհրաժեշտ են նաև առարկայական ուսուցման այլ ոլորտներին: Աշակերտի իմացական գործունեությունը ավելի ակտիվ է դառնում, երբ կատարվում են լաբորատոր և գործնական աշխատանքներ: Օրինակ՝


ծանոթություն հանքային ջրերի հետ նախագծային աշխատանքը կատարելիս աշակերտներին հանձնարարվում է ուսումնասիրել հանքային ջրերի շերտի վրա փակցված պիտակները և կատարել այդ ջրերում իոնների հայտաբերման որակական ռեակցիաները: Նաև առաջարկվում է ուշադիր ընթերցել ջրերի օգտագործման հրահանգները: Մեկ այլ աշխատանքի ժամանակ «Ծանոթացում դիսպերս համակարգերին», աշակերտներին առաջարկվում է ինքնուրույն պատրաստել դիսպերս համակարգերի հավաքածու տանը ունեցած էմուլսիաներից, սուսպենզիաներից, մածուկներից և գելերից. ծանոթանալ գործարանային պիտակների հետ և բացատրել նշված օգտագործման ժամկետի պատճառը: Նմանատիպ առաջադրանքը, որը տալիս է տարրական քիմիապես գրագետ լինելու, ապահովելու մարդու առօրյա կյանքի անվտանգությունը հնարավորություն՝ հրահանգների հետ ծանոթությունն է կենցաղում օգտագործվող պատրաստուկների, սննդանյութերի և այլ նյութերի համար:

**ԳԼՈՒԽ 2**  
**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ**

**Ուսուցիչի համար նախատեսված հարցաթերթիկի վերլուծություն**

*Հարցաթերթի նպատակն է բացահայտել, թե դասագրքերն որքանով են ազդում սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա :*


**1. Ի՞նչ եք հասկանում արժեք ասելով , նշեք դրանք:**



**Գծապատկեր 1.** Վերոհիշյալ հարցին հարցման մասնակից քիմիայի ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 18%-ը նշել է, որ իրենք կարևոր արժեք են հասկանում, այն ինչը կապված է բարոյական արժեքների հետ՝ ընկերասիրություն, ծնողասիրություն, հայրենասիրություն, այդ արժեքները իրենց համար կարևոր են: 30-ը նշել է, որ արժեք ասելով հասկանում են հայրենիք, ընտանիք, տուն, քանի որ ամուր ընտանիքից է սկսվում արժեքային համակարգ ունեցող քաղաքացու դաստիարակումը, 28%-ը նշել են, որ իրենց համար արժեք է այն ինչ կապվում է հարգանքի արժեքների հետ: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: 11%-ը նշել է ճշտապահություն տարբերակը: Այսպիսով ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: «Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում եւ դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը:

Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի»:


**2.Ի՞նչ արժեքներ են այսօր անհրաժեշտ աշակերտներին:**



Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ քիմայի դասագրքերում ներառված դասանյութերը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Այսպիսով՝ ամբողջացնելով մասնակիցների պատասխանները, կարող ենք եզրակացնել, որ դասագրքերում ներառված դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են բազմաթիվ կարևոր արժեքներ:


Հետազոտվող ուսուցիչների մեծամասնությունը՝ 33%-ը, պնդում է, որ քիմայի դասագրքում մեծ տեղ է հասկացվում աշխատանքային դաստիարակությանը, մասնակիցների մյուս մասը՝ 23%-ը առանձնացրել է բարոյական դաստիարակությունները: Դասագրքում տեղ են գտել 23% նաև այնպիսի դասանյութեր, որոնք նպաստում են ընտանեկան, ֆիզիկական, գեղագիտական, բնապահպանական դատիարակության ձևավորմանը: Այսպիսով՝ ուսումնասիրելով քիմիայի ուսուցիչների պատասխանները, կարող ենք հասկանալ, որ դասագրքում մեծ տեղ է տրված աշխատանքային և բարոյական դաստիարակությանը, քիչ մաս չեն, բայց ուսուցիչները պետք է գիտակցեն և դաստիարակեն այնպիսի աշակերտներ, որոնք կունենան համամարդկային արժեքներ և կդաստիարակվեն աշխարհաքաղաքացի:

**3. Քիմիայի դասագրքերը արդյո՞ք հնարավորություն են ընձեռում արժեքների ձևավորման համար:**



**Գծապատկեր 3.** Հետազոտությանը մասնակցող քիմիա դասավանդող ուսուցիչների մեծամասնությունը՝ 78% -ը պնդում է, որ դասագրքում առկա են բազմաթիվ դասանյութերը, որոնք նպաստում են, հնարավորություն են ընձեռում սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Վերլուծելով մասնակիցների նշված պատասխանները կարող ենք եզրակացնել, որ նրանց կողմից առանձնացվել են այն դասանյութերը, որոնցում նկարագրվում, բնութագրվում է բնությունը, գեղեցկությունը, մասնակիցների մյուս մասն էլ նշում է, որ դասագրքի յուրաքանչյուր էջում էլ կան նյութեր, որոնք ունեն գեղագիտական նշանակություն և սովորողների մոտ ձևավորում են գեղագիտական ճաշակ: Ուսուցիչների մեծամասնությունը պնդում է, որ դասագրքում ներառված բոլոր դասանյութերն էլ ունեն դաստիարակչական նշանակություն:

**4. Արժեքների ձևավորման ժամանակ ինչպիսի՞ մանկավարժական պայմաններ եք ապահովում:**




**Գծապատկեր 4.** Հարցախույզին մասնակից քիմիա դասավանդող ուսուցիչների 39%-ի կարծիքով պետք է դասագրքերը համալրել այնպիսի նյութերով, որոնք դպրոցականներին հնարավորություն կտան ճանաչել, բացահայտել ոչ միայն իրենց շրջապատող աշխարհը, այլ նաև սեփական անձը և իրենց դերը հասարակության մեջ: 31%- ի կարծիքով ավելի արդյունավետ կլինի քիմիայի դասագրքերում թեմատիկ խմբեր ավելացնել, որպեսզի դպրոցականը նախ և առաջ ճանաչի ինքն իրեն, արժևորի և ձևավորի նոր աժեհամակարգ: Ուսուցիչների 30%-ի կարծիքով քիմիայի դասագրքեր կառուցվածք պետք է փոխել, այն արդեն արդյունք չի տալիս, աշակերտները հետաքրքրություն չեն ցուցաբերում քիմիա առարկայի նկատմամբ, և չեն կարդում, իսկ գիրք չկարդացող աշակերտը չի կարող ունենա զարգացած արժեքային համակարգ:

Ելնելով վերը նշված հետազոտությունից և կատարելով մի շարք եզրահանգումներ, մենք առաջարկում ենք.

1. Պարբերաբար իրականացվող դասագրքերի վերանայման գործընթացում հետևողականորեն հաշվի առնել գործող մանկավարժների փորձը, որպեսզի դասագրքերը ոչ թե ուղղակի վերահրատարակվեն, այլ ունենան կատարելագործման դինամիկա:
2. Քիմիայի դասագրքերը համալրել այնպիսի դասանյութերով, որոնք դպրոցականներին հնարավորություն կտան ճանաչել, բացահայտել ոչ միայն իրենց շրջապատող աշխարհը, այլ նաև սեփական անձը և իրենց դերը հասարակության մեջ

**5.Արդյո՞ք ձեզ համար կարևորելի բոլոր արժեքներն են ներառվում քիմիայի դասագրքում:**



**Գծագիր 5.** Վերլուծելով քիմայի ուսուցիչների պատասխանները, կարող ենք հասկանալ, որ դասագրքում ներառած առաջադրանքներն ու դասանյութերն իրականացնում են դաստիարակչական մեծ գործառույթ, սակայն դասագրքի օգտագործմանը զուգահեռ պետք է կիրառել նաև այլ միջոցներ:

Քիմիայի ուսուցիչների գերակշռող մեծամասնությունը՝ 68%-ը, նշում է, որ դասագրքում ընդգրկված են արժեհամակարգ զարգացնող և ձևավորող դասանյութեր, որոնց կիրառումը շատ արդյունավետ է սովորողների դաստիարակության գործընթացը կազմակերպելիս: 21%-ը նշել են, որ դասագրքում մասամբ են հանդիպում այնպիսի արժեքների, որը կզարգացնի երեխայի արժեհամակարգը: Ուսուցիչների 11%-ը նշել են, որ բազմաթիվ կարևոր արժեքներ կան, որ նշված չեն, կամ շատ քիչ է նշված:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով վերը նշված հետազոտությունից եկանք հետևյալ եզրահանգումների,

➤ Հանրակրթական դպրոցում դասավանդվող առարկաները, ազատ հաղորդակցումը, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը մեծ ազդեցություն են թողնում սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա. արժեհամակարգի ձևավորման թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման բացասական հետևանքների:

➤ Հանրակրթական դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, անհատական պահանջմունքները՝ ձևավորելով հասարակության զարգացման համար անհրաժեշտ անձնային որակներ:

➤ Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ գոյություն ունի ուսումնական դասագրքերի տարբեր սահմանումներ և նկարագրություններ: Ամբողջացնելով դրանք, կարելի է նշել, որ ուսումնական դասագիրքն այն գիրքն է, որը բովանդակում է տվյալ ուսումնական առարկայի գիտական գիտելիքների հիմունքները, շարադրված է ըստ դիդակտիկական սկզբունքների, համապատասխանում է ուսումնական ծրագրերի պահանջներին, նախատեսված է ուսումնական նպատակների իրագործման համար և բխում է հասարակության պահանջմունքներից, գիտատեխնիկական առաջընթացի արդի միտումներից:

➤ <<Քիմիա>> դասագրքի դերը սովորողների արժեկողմնորոշման գործում մեծ է. ազգային հպարտության ոգով, ստեղծագործական, մշակութային որակներով սոցիալականացված անհատի ձևավորման ու զարգացման համար, որի համար պետք է ներառվեն դաստիարակության հետևյալ բաղադրիչները.

- Բարոյական արժեքներ՝ ազնվություն, սեր իր և միջավայրի հանդեպ, հարգանք, հոգատարություն,



- Գեղագիտական արժեքներ՝ գեղեցիկի, մարդու, շրջակա միջավայրի ճանաչում, ընդունում և պահպանում,
- Մտավոր արժեքներ՝ սեր դեպի գիտելիքը, դպրոցը, գիրքը, ինքնաճանաչողություն,
- Իրավական արժեքներ՝ իրավունքի ձևավորում, պարտաճանաչություն, կարգապահություն ,
- Ֆիզիկական արժեքներ՝ անձնական հիգիենա, առողջություն, օրվա ռեժիմ և այլն:
- Սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդրի կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում հասարակության արժեքային պատկերացումների շարունակական գործընթացներից: Ձևավորված արժեհամակարգի հիման վրա են որոշվում անձի վարքի դրսևորումներն ու մտածելակերպը

## Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս.: Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար: «Մանկավարժ» հր.:Երևան, 2005, 456 էջ
2. Ամիրբեկյան Գ., Վարդանյան Ա.Տ.: Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: Երևան, «Նոյյան տապան», 2005, 407 էջ
3. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ հատոր, «Լույս», 1987
4. Դասախոսությունների դասընթաց մանկավարժությունից / Գ.Հ. Հարությունյան,Ռ.Ջ. Աղաբեկյան, Ջ. Բաղդասարյան, 2011
5. Էլկոնին Դ.Բ.: դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1975, 68 էջ
6. Ղույունյան Գ.Ե.,Դեռահասի գիտական համոզմունքների ձևավորմանը ուսուցման գործընթացում. Երևան, Լույս, 1986
7. Ղույունյան Գ. Ե., Մանկավարժություն. երկու գրքով, Գիրք 1, Եր., «Զանգակ 97»,2005, 464 էջ
8. Թունյան Ջ.Ե.,Լ.Ս.Երիցյան:Կրտսեր դպրոցականի հոգեբանություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, 2013թ
9. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981 թ
10. Քիմիայի, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան): Եր., Անտարես, 2011, 81 էջ
11. Քիմիա, բնագիտության, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարան): Եր., Անտարես, 2011, 40 էջ